Առաջարկի պարզեցված ձևաչափ	
/Առաջարկի անվանումը/ **Կառավարության հրապարակայնության և** տեղեկատվության **ազատության ոլորտի ինքնագնահատման մեխանիզմի ներդրում**	
Առաջարկն իրականացնող մարմին	Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմին «Ինֆորցմացիայի ազատության կետրոն» ՀԿ համագործակցությամբ
Հիմնական նպատակ	Խթանել պետական կառավարման համակարգի հրապարակայնությունը, հաշվետվողականությունը և տեղեկատվության ազատությունը՝ ներդնելով գնահատման հրապարակային և թափանցիկ համակարգ:
Առաջարկի համառոտ նկարագրություն	ՏԱ ոլորտում իրավական պարտավորությունների կատարման, ինչպես նաև դրանց արդյունավետության վերաբերյալ համակարգված և փաստահեն տեղեկատվական բազա **հավաքագրելու և հանրայնացնելու նպատակով**, առաջարկվում է մշակել և ներդնել ՏԱ ոլորտի ինքնագնահատման համակարգ, որը պետական լիազոր մարմինը կկարողանա ամեն տարի օգտագործել՝ գնահատելու պետական կառավարման համակարգի ՏԱ իրավունքի իրացման գործընթացը: Գնահատման համակարգի մշակման շրջանակում հաշվի կառնվեն ոչ միայն գործընթացը կարգավորող միջազգային ու տեղական չափորոշիչներն, այլև

	որորտի հիմնական դերակատարների՝ պետական կառավարման մարմինների ՏԱ պատասխանատուների, քարտուղարությունը համակարգող հանրային ծառայողների, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը կառավարող կազմակերպության ներկայացուցիչների, ինչպես նաև մասնագիտացած քաղաքացիական հասարակության կառույցների դիտարկումները: Գնահատման համակարգը հնարավորություն կտա դիտարկել ՏԱ մի քանի բաղադրիչ, ինչպես օրինակ Տեղեկության մատչելիությունը/հասանելիությունը, թեմատիկ ծածկույթը, ստացած հարցումները, մերժումների ու բողոքարկումների քանակական և բովանդակային տվյալները և այլն: Համակարգը կներառի նաև վիճակագրության վարման և հանրայնացման մեկ միասնական ձևաչափ, որը հնարավորություն կտա առնվազն նույնական և համադրելի եղանակով կիրառել վիճակագրության մասով օրենքով ամրագրված նորմերը: Միաժամանակ սա հրաշալի միջոց է ձևավորելու վիճակագրության մշակման և հանրայնացման միասնական պրակտիկա՝ ապահովելով դրանց համադրումն ու արդյունավետ կիրառությունը ոլորտի բոլոր դերակատարների կողմից: Հանձնառության շրջանակում նախատեսվում է. • մշակել ՏԱ ոլորտի ինքնագնահատման չափանիշներ, • մշակել պետական մարմինների կողմից ՏԱ վիճակագրության վարման և հաշվետվողականության միասնական մեխանիզմներ, • ներդնել գնահատման միասնական համակարգն ու ապահովել դրա կիրառության համար անհրաժեշտ պայմաններ:
Համապատասխանությունը ԲԿԳ սկզբունքներին	Տեղեկատվության մատչելիության և հրապարակայնության ապահովում
Ի՞նչ արդյունքներ եք ակնկալում ստանալ արդյունքում:	Հանձնառության շնորհիվ ՏԱ ոլորտի բոլոր դերակատարները կունենան ՏԱ իրավունքի իրացման մասին փաստահեն, ամբողջական և մատչելի տեղեկություն, ինչը կարևոր է նախապայման է հանրային վերահսկողության, ինչպես նաև ոլորտին առնչվող արդյունավետ որոշումների և բարեփոխումների

	համար:
Կառավարության ներկայացված ո՞ր առաջնահերթությունից է բխում:	Առաջարկը համահունչ է **ՀՀ կառավարության հանրային կառավարման բարեփոխումների մինչև 2030 թվականի ռազմավարության փաթեթով նախատեսված «Տեղեկատվության ազատության իրավունքի մասին վիճակագրության վարման, մոնիտորինգի և հաշվետվությունների համակարգի մշակում և ներդրում»** գործողությանն ու Ռազմավարության՝ «Տեղեկատվության ազատության իրավունքը լիովին իրացված է հանրային իշխանություն-քաղաքացի հարթությունում» ենթաբաժնում Հանրային կառավարման բարեփոխումների գրասենյակի կողմից առանձնացված «Տեղեկատվության ազատության վիճակի մոնիտորինգի մանդատի սահմանում» (1.40) և «Տեղեկատվության ազատության իրավունքի մասին վիճակագրության վարման, մոնիտորինգի և հաշվետվությունների համակարգի մշակում և ներդրում» գործողություն-կետերից(1.41) ակնկալվող արդյունքներին: Իրականացման վերջնաժամկետ՝ 2022 դեկտեմբեր:
Առաջարկ ներկայացնող անձի/կազմակերպության տվյալները	1. Կազմակերպության անվանումը՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ 2. Էլ. հասցե՝ foi@foi.am, sh.dodoyan@icloud.com 3. Հեռախոսահամար՝ ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան - 091407836